ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մարտի 2022 թվականի № --Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի №11Ա ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի №25-Ա ՈՐՈՇՈՒՄԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 51-րդ կետը, և հաշվի առնելով «ՄԱՎՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի փետրվարի 10-ի և փետրվարի 24-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 22-ի «ՄԱՎՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Չանախչի ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №11Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի ՝

1) 3-րդ կետում «մինչև 2022 թվականի հոկտեմբերի 2-ը» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի մարտի 3-ը» բառերով,

2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 2500 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) Հիդրոտուրբին N1՝ ֆրենսիս ակտիվ ԱԹՓ–1250, 1250 կՎտ, 2018թ.,

2) Գեներատոր սինխրոն N1՝ СДН2-16-56-10УХП4, 1000 կՎտ, 2014թ.,

3) Հիդրոտուրբին N2՝ ֆրենսիս ակտիվ ԱԹՓ–1250, 1250 կՎտ, 2018թ,

4) Գեներատոր սինխրոն N2՝ СДН2-16-56-10УХП4, 1000 կՎտ, 2014թ.,

5) Հիդրոտուրբին N3՝ ֆրենսիս ակտիվ ԱԹՓ–750, 750 կՎտ, 2018թ.,

6) Գեներատոր սինխրոն N3՝ СДН2-16-56-10УХП2, 500 կՎտ, 2014թ:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 22-ի №11Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №25-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը:
3. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №COD/1826 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մարտի 2022թ.